

Ատոնցմէ որո՞ւն մէջ գետեղելի էր սակայն վիճակը սա գեղին, ուրկէ սկիզբ կ'առնէ Մաթիկ Մելիքխանեանին պատահարը: Իմ գտածս ու տեսածս այն էր, որ Հայաստանէն Հազարաւոր քիլոմէթրով բաժնուած ու թրքութեան ծովուն մէջ տառացի խեղդուած այդ գեղին շուրջը մշակելի հողը քառորդն իսկ չէր ներկայացներ խոպանին, որ տիրակալ արձակութիւն մըն էր, ժայռաստանի, մօրուտքի, անբեր աւազներու կերպարանքին տակ: Հո՛ղը, այսինքն՝ ա՛ն, ուրկէ հացը կը բուսնի, իր կարգին հետ ու անընտել, սովորութիւն ունէր խաբելու, առնուազն առածը միայն ետ տալու, վրայէ վրայ, տարիներ շարունակ: Անձրեւները օգտագործել, այսինքն՝ անոնց քշած դիրտերը տարուէ տարի խնայել ու մանկութեան սկսուած պարտէզիկը չափահասութեան աւարտելը այդ գեղացիներուն համար պապենական աւանդութիւն էր: Այսպէսով է, որ ժայռաստանին զանազան կէտերուն յօրինուած էին կալիկներ, քառակուսիներ, եռանկիւններ, ուր կիներու նետած ոսպը, սիսեռը սանկ գարնան կանանչնալ ունէին: Բայց քիչ, քիչ, քիչ: Ա՛յնքան՝ որ սրամտութիւն ըլլալէ աւելի իրական պատկեր էր հեգնութիւնը, որով հողը կը յայտարարուէր ուտուելու համար ստեղծուած եւ ոչ թէ մշակուելու: Գիւղացին, առանց հողի: Դժուա՞ր՝ ըմբռնել սա իրողութիւնը: Եւ սակայն իրաւ էր անիկա: Ու ապրիլը՝ պարտք, դրուած ուսին տանողին՝ ինչպէս չտանողին: Վարը, դաշտի բոլոր հանգրքուաններուն, գիւղակներ, պարզ, բայց հողառատ: Որոնց բախտն էր ճամբի մը ունենալ իրենց կեդրոնը, զանգակատան փոխարէն: Հոն մարդերը չէին իսկ մտածեր հող ըսուած հարցի մը: Ասդին, զանգակով պատժուած գեղին մէջ, գեղերու մէջ մարդիկ պիտի ծնէին աղքատ, արգանդէն իսկ զուրկ, պիտի աճէին աղքատ, խարխուլ խրճիթէ մը ներս, հողով յատակուած, քանի մը խաիր, ճահիճէն «քաշուած» ձրի բերք, արեան տուրքով մը մժեղներուն պայմանաւոր, այծու մազէ վերմակ, փայտէ պնակներ, դժուամէ սափորներ, թի, բահ, բրիչ, քիչ անգամ